

Տիեզերք և տիեզերական մարմիններ

Տիեզերքը շատ-շատ մեծ է: Ինչքան էլ փորձես հեռուն նայել, միևնույնն է, տիեզերքի ծայրը տեսնել հնարավոր չէ, քանի որ այն գոյութիւն չունի:

Ոչ ոք չգիտի, թե երբ ու ինչպես է առաջացել տիեզերքը: Գիտնականները ենթադրում են, որ սկզբում այն մի մեծ խիտ, հրե գնդի է նման եղել:

Հետո, մոտավորապես տաս-քսան միլիարդ տարի առաջ հզոր պայթյուն է տեղի ունեցել, որն ընդունված է անվանել «մեծ պայթյուն»:

Այդ գնդի կտորները ցրվել են տարբեր կողմեր և վերածվել երկնային մարմինների, որոնք էլ հիմա կազմում են տիեզերքը:


Երկնային մարմինները տարբերվում են իրենց չափերով, ձևով, ինչպես նաև տիեզերքում շարժվելու ձևերով: Ամենատարածված երկնային մարմիններից են աստղերը, մոլորակները, գիսաստղերն ու երկնաքարերը:



Աստղերը լուսարձակող երկնային մարմիններ են: Սրանք բոլորն էլ մեծ չափեր ունեն: Իսկ մեզ փոքր են թվում, քանի որ չափազանց հեռվում են գտնվում: Աստղերը լինում են կապույտ, սպիտակ, դեղին,

Նարնջագույն ու կարմիր: Մեր Արևը նույնպես ասող է: Աստղերի խմբավորումներն անվանում են համաստեղություններ: Դրանցից ամենահայտնիներից է Ճիր Կաթինը: Հենց այս համաստեղության մեջ են մտնում Արևն ու Երկիրը:

Մոլորակները երկնային մարմիններ են, որոնք պտտվում են աստղերի շուրջը: Մոլորակներն իրենք լույս չեն արձակում, այլ միայն արտացոլում են աստղերի լույսը: Արևի շուրջը պտտվում են ինը մոլորակ: Արևին ամենամոտ մոլորակը Մերկուրին է (Փայլածու), այնուհետև՝ Վեներան (Արևայակ), Երկիրը, Մարսը (Հրատ), Յուպիտերը (Լուսնթագ), Սատուրնը (Երևակ), Ուրանն ու Նեպտունը: Որոշ գիտնականներ հիմա Պլուտոնը համարում են ոչ թե մոլորակ, այլ փոքրիկ երկնային մարմին:



Արբանյակները փոքրիկ երկնային մարմիններ են, որոնք պտտվում են մոլորակների շուրջ: Արեգակնային համակարգի գրեթե բոլոր մոլորակները (բացառությամբ Մերկուրիի ու Վեներայի) ունեն արբանյակներ: Երկրի արբանյակը լուսինն է:

Գիսաստղերը փոքրիկ երկնային մարմիններ են, որոնք շատ մեծ արագությամբ շարժվում են ձգված հետագծերով: Չնայած, որ գիսաստղերն այնքան էլ մեծ չեն, նրանք իրենց հետևից հաճախ մեծ, լուսավոր «պոչ» են ունենում:



Երկնաքարերը փոքրիկ երկնային մարմիններ են, որոնք շատ արագ տեղաշարժվում են տիեզերքում: Երբեմն սրանք դիպչում են Երկրին: Ընդ որում, ամենափոքր երկնաքարերը քայքայվում են մթնոլորտում, իսկ մեծերը՝ փշրվում են դիպչելով Երկրի մակերեսին: